

THE
DICKRIS PUBLISHING CO.
NEW YORK CITY.



ՏԵԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲՍԾ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԻՆ ԱՌՋԵՆԻ:

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ, ԹԻՒ 64

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ՅՈՒՆՎԱՐ 28 1899

ԳԻՆ 3 ԱՆՆԹ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ


Վաղը Ս. Ոսկերբան եկեղեցւոյ մէջ՝ Հոգարարձութեան մասնաւոր կարգադրութեամբ, հոգեհանգիստի պաշտօն պիտի կատարուի ի յիշատակ հանգուցեալ Նուպար Փաշայի: Օրուան քարոզը պիտի խօսի Սարաճեան Սըրբազան: Կը յուսանք որ Նիւ Եորքի Հայ ժողովուրդը իր յարգանքն ու համակրանքն պիտի յայտնէ իր մեծ հայրենակցի յիշատակին՝ ներկայ լինելով այս կրօնական—ազգային արարողութեան:

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

Բ.


Նուպար Փաշա Փարիզի մէջ տեղի ունենալիք դրամական վեհաժողովին լիազօր ներկայացուցիչ գնաց եգիպտոսէն՝ 1866 թուականին: Իւր այս պաշտօն կատարելով գոհ չի մընաց Հայ փաշան, այլ առիթէն օգուտ քաղելով՝ եգիպտոսի եւրոպական հիւպատոսներու իրաւասութեան սահմանն յաջողեցաւ ճշգրտել՝ այդ նպատակաւ միջնորդային մասնաւոր յանձնարարութեամբ մը կողմէնով, վերադառնալէ առաջ տեսնուեցաւ եւրոպական կարեւոր քաղաքագէտներու հետ. այցելեց Վիեննա և անկէ Պոլիս գնաց, ուր Բ. Դանէն դատական բարենորոգմանց հրամանագիրը ստացաւ. այդ օրէ ի վեր գոյութիւն ունեցան եգիպտոսի մէջ դատական այն խառնատեսակներն, որք արդարութիւնն գործադրելու համար լուսաբայն դատարանները նկատուած են դատական աշխարհի մէջ, եւ Նուպար փաշա հայրն եղաւ այս օգտակար բարենորոգման, որ եգիպտոսի համար մեծ ծառայութիւն մ'էր ինքին:

Խորով իսմայիլ փաշա ինքզինքը երբ նիւթական անձուկ ու սնանկ վիճակի մը ենթարկուած գտաւ՝ իւր անհաշիւ ու զեղխ ծախքերով, Նուպար Փաշա օգնութեան հասաւ: Յըրանքս-Անգղիական յանձնարարութեամբ մը կողմէնով, որոյ պաշտօնն էր ելեմըսից պիւտեմը մը պատրաստել ու սնոր գործադրութեանը հսկել: 1878 ին Նուպար Փաշա նախարարակետ եղաւ: Ժողովուրդի մէջ սակայն շարժում մը կար իրեն դէմ. հասարակութիւնը դժգոհ էր նոր տուրքերէն ու կառավարական նոր դրութեանէն, և այս հակա-Նուպար շարժման պարագլուխն էր ինք՝ Խորով իսմայիլ, որոյ մէջ միահամբան սէր և իշխող լինելու անց մը կար ստակայի: Հայ նախարարակետը ստիպուեցաւ հրաժարիլ ու ճեւրտուաւ երթալ: Կը պատմուի թէ Նուպար Փաշա այդ առթիւ պարտաւէն գուրու ելած պահուն պղծակ վիճարանութիւն մը կուսնենայ իսմայիլին հետ. — Ես նորէն պիտի վերադառնամ, կ'ըսէ, երբ դուք հոս չըլլաք այլևս, ու կը մեկնի գայրացած: Նուպար Փաշա իւր խօսքը պահեց: 1879 ին իսմայիլ փաշա ա-



ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

ուք փսփօք պաշտօնանկ եղաւ, ու անոր տղան Թէֆիք յաջորդեց իրեն: Արաբի Փաշայի ապստամբութեան և Անգղիոյ միջամտութեան ատեն Նուպար Փաշա Եւրոպայ էր՝ գործէ բոլորովին ձեռնպահ: Ոմանք կը կարծեն սակայն թէ Հայ նախարարակետն է եղած անգղիական զբաւումը քաշալեւող անձը. վասն զի կը հաստայ եղեր թէ նոր Խորովի տկար անձնաւորութիւնն ո' է քարենորոգում էր կրնար խոտտանալ երկրին համար: 1889 ին Խորովի և Անգղիոյ մէջ յարաբերութիւնը ձգտած էին, անակ որ Նուպար Փաշա միակ կարող անձն էր համաձայնութիւն մը յառաջ բերելու համար, և Հայ քաղաքագէտը նորէն կանչուեցաւ նախարարակետ ըլլալ: 1888 ին Հայ նախարարակետի և Թէֆիք փաշայի մէջ տեղ անհամաձայնութիւն մը ծագեցաւ՝ բարենորոգմանց ու վերակազմութեան խնդրոյ առթիւ, և առաջինն հրաժարեցաւ նորէն: Խորովի մահուանէ վերջ, երբ Ապպա Ռ. գահը ելաւ, իրաց վիճակը այնչափ անգոհացուցիչ էր՝ ինչ փաշայի նախարարութեան տակ, որ վերջապէս 1893 ին Խորովի ու Բիշնըր փաշայի միջև մեծ անհամաձայնութիւն մը յառաջ եկաւ: Կնճիւր մեծ էր. թէ՛ Անգղիոյ և թէ՛ Խորովի կողմէ Հայ փաշան միայն յարմար սեպուեցաւ զայն լուծելու ու հաշտութիւն մը յառաջ բերելու համար: Նուպար Փաշա նորէն նախարարակետ, միանգամայն ներքին Գործոց նախարար եղաւ, ու քիչ ատենէն, իրմով ղեկավարութիւնը լուծուեցան ու խաղաղութիւնն տիրեց երկու կողմերուն մէջ: 1895 ին իր Շուպրայի ազարակին մէջ Նուպար փաշա ինչպիսի՞նք ոտքը կոտրեց, և այդ օրէն ի վեր առողջութիւնն օրէ օր խանգարուիլ սկսեց, և չի կրնարով դարման մը գտնել՝ 96 ին քաշուեցաւ հըրապարակէն ու գնաց Փարիզ ապրիլ իր Ռի Պուստիէրի տան մէջ, ուր կնքեց իր բեղմնաւոր կեանքը անցեալ Շաբաթ օր:



ԶԵՅԹՈՒՆԻ ՍԻՆԱԿԸ

— Ընդհ. Գանձապետն ստացած է ցարդ. —

Արդէն ծանուցեալ	\$850.88
Ուսուցիչներու	48.00
Գերմանիայէն Տիգրիսի միջոցաւ եկած (110 մարք)	26.00
Քէյմպրիճէն	60.00
Գ. Պարոնեանէ	1.00
Գումար	\$985.88

Նիւ Եորքի Յանձնարարութեան օրէն 400 տոլարէ քիչ մը աւելի, զոր պիտի յանձնէ Գանձապետն այս օրեր: Նամակապէս ձէջրի հանդիսին հասցի՞ք՝ 50 տոլար պիտի զրկուի Գանձապետին, և անկէ քաշուցի կոյի Հայերն Տ. Քէյմպրիճէանի յանձնած են 59 տոլար՝ Նիւ Եորք զրկուելու համար:

Աս տողեր մամլոյ զրկուած ատեն՝ այս դրամներն Գանձապետին հասած կըլլան անշուշտ, որով ցարդ Տ. Թաւշանեանի քով գումարուած դրամը կը հասնի 1494.88 տոլարի: Կոյրերը 60 տոլար կը կարծեն այս գումարը: Գանձապետի հասցէն է.

MR. H. TAVSHANJIAN,
343 B'WAY, NEW YORK CITY

ՎԱՂԻՆԱԿ ՎԱՐՆԱՊԵՏՆ

ՈՒ ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆՆ

Անցեալ կիրակի օր Փրովիտէնսի Հնչակեաններն հրապարակային ժողով մը ըրած են՝ նախագահութեամբ Տ. Վաղինակ վարդապետի, և ատենապետութեամբ Պատ. Մարգարեանի: Օրուան ու առթիւն յարմար ճառեր խօսելէ ու երգեր երգելէ վերջ՝ Վաղինակ վարդապետ ալ «երկու խօսք» ըսած է. «Հայր Սուրբ, կ'ըսէ մեր թղթակիցը, թողուց օրուան նիւթն ու իր Ս. Պատրիարքէն վերջերս ստացած նամակը կարդաց՝ վստահացնելու համար ժողովուրդը թէ իր զրկած 100 տոլարը կորսուած էր, և ասով ամբաստանել ջանաց Տիգրիսն ու անոր Թղթակիցը: Հայր Վաղինակէ՛ ինչպէս նաեւ ընթերցողներէ կը խնդրեմ որ նորէն կարդան Տիգրիսի 62րդ թիւը եւ տեսնեն թէ Փրովիտէնսի թղթակիցը ինչ բանի վրայ է որ կը շեշտէ: Այդ տողեր գրելէ առաջ ձեր թղթակիցը գիտէր թէ մընի օրսըրով զրկուած բուն դրամը չէր կորսուել, այլ թուղթերը կրնային կորսուիլ. և ասկէ զատ՝ իւր միակ նպատակն էր գիտցնել թէ մենք՝ Փրովիտէնսիներս՝ այս գործին մէջ ընդհանուրին հետ

միանալու էինք. մեր դրամը փոխանակ Ս. Պատրիարքին զրկելու ինչո՞ւ ընդհանուր Գանձապետին չի յղէինք: Բայց կ'երևի թէ Վարդապետին մեղքը մեղք չէ, զի ինքն է թողութիւն չնորհողը...»:

ՎԷՃ ՄԸՆ ԱՆ ԹՐՈՑ

Թրոյի մէջ տնցեալներն ընդհանուր ժողով մը տեղի կուսնենայ՝ մըրտածելու համար թէ Զէյթունի ինպատակ հոն հանգանակուած դրամը ինչպէ՞ս զրկուել է: Թեր ու դէմ խօսակցութիւններէ վերջ, Պ. Յ. Աւագեան անուն մէկը քանի մը ծանրակարգութիւններ ու ամբաստանութիւններ կընէ Պատրիարքին ու Պատրիարքարանի դէմ, և միւս կողմէ կը դրուատէ միսիօնըները: Ուրիշ բողոքական ազգային մը՝ Տ. Հ. Մ. Շահինեան կը պահանջէ ատենախօսելու ատեն իր առջի խօսքերն, բայց ի հարկէ չի յաջողիր: Ժողովէն վերջ Տ. Շահինեան նամակաւ նոյնն կը պահանջէ յիշեալ անձէն՝ հակառակ պարագային պատուոյ ատենին մը առջև զայն դատի վաշտաւ սպանալու: Աւագեան չի պատասխաներ նորէն, և կը շարունակէ լուս մնալ ուրիշ նամանօրինակ նամակներու: Հիմայ կըսուի թէ խնդրը մատչողութիւն պատճառելու շափ յառաջ դնուած է: Շարժում մէջ՝ այս մասին քանի մը նամակներ ստացած ենք, որք մէկ կամ միւս կողմը կը մեղադրեն ու կը փախաբանեն որ մասնաւոր խնդիր ընենք այս վիճարանութիւնն Տիգրիսի մէջ: Սակայն հրատարակուած լուծուելու շափ կարեւոր բան մը չենք նկատեր զայս, և հետեւաբար կը բաւականանանք խնդրել մեր յիշեալ հայրենակիցներէ որ ջանան կերպով մը իրենց մէջ կարգադրել այս խնդիր՝ առանց անպատեհութեանց ու կրօնական վիճարանութեանց սեղի տալու:

ԳՈՒՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՄՍՍԻՆ

Ամեն անոնք որք քուէ տալ կուզեն, պարտին աճապարել, զի մէկ երկու շաբաթէն պիտի գոցենք քուէարկութիւնն: Ոմանք մարդիկ, թէ՛ հոս և թէ՛ գուրսերը, կը խրատեն եղբր ժողովուրդը ձեռնպահ մնալ այս խնդրի մէջ: Ձեռնպահ մնալը եպիսկոպոսին բարեկամութիւն ընել չի նշանակեր, և ո՛չ ալ Տիգրիսին հակառակութիւն: Բուէ սուտղներուն անունները չի պիտի հրատարակուին, հակառակ ոմանց կարծածին: Բուէաթուղթ շունեցողներն կըրնան դիմել մեզ կամ մեր գործակալներուն: Բուէաթուղթ կարելի է ստանալ նաև Պ. Ուզունեանէ, որուն վաճառատան մէջ գրուած է քուէատու վը: Բուէներն պէտք է զրկել հետեւեալ հասցէով: To the Dickris Committee, 169 E. 27th Street, New York City.



ՇԱՐԿԱՅԻՆ ԱՅՐԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻՆ ԵՄԵՐՈՒ ՕՐԵՐ,
ՏԻԳՐԻՍ ՀՐԱՏԱՐԱԿՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԱՆԷ՛:

Հ. ԷԿԻՆԵԱՆ - - - - ԽՄՐԱԳԻՐ

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	
ՏԻ. ՍԹ.	Տարեկան	10 Ֆրանք.
Տարեկան	1	50
Վեցամսեայ	75	Բաժանորդագրին կԱՆՈՒԿ վճարելի է միշտ:
Եռամսեայ	40	

Մտր կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 145 East 23d St., New York City

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆՈՒ ԵՆՈՐՔ, ՇԱՐԿԱՅԻՆ, ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏ 28 1899.

«ՀԻՆԳ ՏԱՐԻ ՊԱՀՔ»

Ա.

Ռուսիոյ Չարին խաղաղութեան ծանօթ առաջարկը օրէ
օր մեծ ընդունելութիւն կը գտնէ ամեն երկրի՝ մանա-
ւանդ հասարակ դասու ժողովրդեան մէջ. և բնական էր որ
այսպէս ըլլաք, վասն զի թագաւոր քանի մը բռնակալնե-
րու հրամանը կատարելու համար՝ շատ անգամ ջարդուիլ
ու ստատալի ստիպուող խեղճ զինուորը հասարակ ժողո-
վրդէն կուգայ ամեն տեղ: Անգլիական լրագրաց նայե-
լով՝ Ռեզիլ օֆ Ռեզիլիսի հռչակագոր Խմբագիրը, համա-
կիրներու ահագին բանակ մը ձգած իր ետեւէն, և հասարակ
ժողովրդի ձայնով ու քուէնքը զինուած՝ այս խնդրոյն մէջ
յաղթանակ մը տանել կը պատրաստուի՝ յանուն արեւելե-
րական խաղաղութեան:

Ընթերցողք զիտեն անշուշտ թէ Չարին — խաղաղու-
թեան այս նոր աղանձին — անմեղ առաջարկը երեք զԸ-
լիսու որ մասերէ կը բաղկանար. առաջինն ու կարեւորն է՝
միանգ հինգ պարի տէրութիւնք իրենց ներքին բարեկեցութիւնն
— բանակ ու նաւատորմիդ — չի ջանան մեծցնել: 2. Այս
ժամանակամիջոցի մէջ ամեն համազայն խնդիր լուծել
հաշտարար ժողովի մը ձեռքով: 3. Տէրութիւնք իրաւունք
ունենան սակայն իրենց զէնքերն ու պատերազմական գոր-
ծիներն կատարելագործել, որչափ որ կամին և կրնան:

Խաղաղութեան այս ձիթնի ճիւղերը, եթէ վառող է
ու կապարէ շինուած չեն, կրնան անշուշտ քայլ մը նը-
կատուիլ «մի հօտ և մի հովիւ» մեծ վարդապետութեան
ճամբուն վրայ. սակայն խնդիր է թէ այս անմեղ առա-
ջարկներն պիտի կրնան յաջողիլ, քանի որ Տէրութիւնք
տարիներէ ի վեր, սպառազինեալ, ընդհարման մը կ'սպա-
սեն, և որ աւելին է, աշխարհակալութեան անյազ տենչը
օրէ օր կ'աճի անոնց ամէն մէկին մէջ:

Քաղաքական աշխարհի ներկայ վիճակն ու անոր յարա-
կից պարագաներն երբ աչքի առնել բերենք վայրկեան մը,
կատրուակներ՝ հակառակ մեր փափաքին՝ Չարի այս առա-
ջարկներն երազ մը նկատել, ու աղանձի մարթով ծած-
կուած արջի խաղաղութեան ձիթնի՝ թագուն նպատակ
մը ի գործ դնելու համար կանանչներով ծածկուած երկ-
սայրի մի սուր:

Պատերազմները դժգոհութեան արդիւնք են: Աշխար-
հիս վրայէն այս վայրագ սովորութիւնը բնաջինջ ընելու
համար, պէտք է նախ տէրութիւններն զոհ ընել իրենց
վիճակէն. արդ Եւրոպական կառավարութեանց ո՞րը գոհ
է այժմ: Գաղղիա կարելի է որ Ալգաս Լորէնը մտնայ.
Գերմանիա Ֆրանսայի այդ նահանգներն՝ առանց պատե-
րազմի՝ ետ ալ յանձն կրնայ առնել: Չինական գործերն
Անգլիոյ ու Ռուսիոյ համար գոհացուցիչ են հիմայ: Աֆ-
րիկէի այլ և այլ կողմերն սիրող ներկայ կացութիւնն դեժ-
գոհութիւն յառաջ չ'ի բերեր Եւրոպայի համար: աշխարհի
երկու մեծ հսկաները — Անգլիա և Ռուսիա — պիտի գաղ-
թին Աֆրիկէի ու Ասիոյ մէջ իրարու հետ մրցելէ: Ասոնք
ամենն ալ անկարելիութիւններ են՝ զէթ ներկայ ժամա-
նակի համար. և հետեւարար, եթէ երբէք համաձայնութիւն
վը գոյանայ այս մասին Տէրութեանց մէջտեղ, ժամանա-
կաւոր և բռնագործի բան մը եղած պիտի ըլլայ, և բնաւ
չի պիտի կրնայ ու յափշտակիչները գոհ ընել իրենց ներկայ
վիճակէն ու ունեցածէն: Եւ առաջարկն ալ անկեղծ չերե-
ւիր ինքնին, թէ և Քրիստոնեայ աշխարհը ծափերով ըն-
դունէց զայն:

Չինականց ըլլալ հինգ տարիի համար միայն, աշխարհիս
խաղաղութիւն չի բերեր բնաւ, ինչպէս որ զինադադարը
պատերազմներու իրական վերջուորութիւնը չի կրնար կար-
ծուիլ: Մարդասպանութեան արտօնեալ, բայց ամենասոս-
կալի այս կերպը ընչեւու համար՝ գէթ ներկայիս համար

զայն արգելելու էր բոլորովին, զի այժմեան սերունդը
ընտելացած ու ընտանեցած է այդ գաղափարի հետ ու կը
կարծէ թէ մարդկային օրէնքի արտօնած ամեն բանը բա-
րոյականի և խիղճի հակառակ չէ բնաւ: Եթէ Չարի յատա-
կազմով՝ մարդիկ հինգ տարի վերջ նորէն արտօնութիւն
պիտի ունենան իրարու միս ուտել պատերազմի դաշտին
վրայ, մարդկութիւնն ի՞նչ կը շահի հինգ տարի պահք
պահելով. ո՞չ ապաքէն պահոց ենթարկեալ մարդիկ միս
ուտելու տենչով աւելի կը գրգռին, ու պահքն անոնց մէջ
անդուստ փափաք մը կը դնէ, նաւակատեաց օրն իսկ, ձեռ-
քերին ինկած ամեն շնչաւորները յօշտեալ վայրագարար:

Չարի առաջարկին այն մասը, որ կ'արտօնէ Տէրութիւն-
ները այս «մեծ պահոց» մէջ իրենց զէնքերն ու պատե-
րազմի գործիներն կատարելագործել, ո՞չ միայն առիթ
պիտի սայ մարդոց աւելիչ նորանոր զէնքեր ու պայթու-
ցիկ նրթեր հնարել՝ ի զիստ անմեղ ժողովրդին, այլ ան-
վերջանալի կատարելութեան և խռովութիւններու պատճառ
պիտի ըլլայ միշտ: Այսպիսի առաջարկութիւն մը ընդուն-
ուելէ վերջ՝ զենք թէ Անգլիա նորահնար զէնքերով զի-
նէ իր գործերը, ու հինգած գրահաւորներու տեղ՝ պա-
տերազմական ահոյի մարտանաւեր կառուցանէ. Ռուսիա
ի տես այս ամենուն՝ կարելի է կարծել թէ անհոգ ու
հանգիստ պիտի կրնայ ննջել զիշխները. — երբէք ո՞չ. եւ
ընդհակառակն՝ պիտի ստիպուի հետեւիլ իր մրցակցի օ-
րինակին, կամ պատուել այն դաշնագիրը, զոր մարդիկ
կը յուսան քիչ տտենէն ստորագրուած տեսնել:

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Հինգ դարէ ի վեր է որ Հայոց ազգն հին ցաւով մը
անկողին մտած չէ: Օրը նոր ցաւը նոր...:

Կը ցաւիմ ըսել թէ Հայուն այս վերջի կրած ցաւը ան-
բուժելի ու մահացուցիչ է, և որ չի նմանիր հարիւր հա-
զար ջարդուածներու կամ Ասորպատականի մէջ եղածնե-
րու պատճառած ցաւին: Մեծն Պետրոսի բարբարոս ու ան-
գութ զաւակներուն՝ Ռուսահայաստանի դպրոցները գրա-
ւելու ցաւն է այս:

Եւ ի՞նչ ստուալի բարբարոսութիւն է. ո՞չ, ի՞նչ սև
օրեր եկան Հայու գլխուն:

Գիտեմ, եղբայրներ, այս մասին ամենքդ ալ վշտացած
էք, և ան որ վշտացած չէ այս անիրաւ եղածին, ո՞չ մարդ
է և ո՞չ ալ Հայ:

Կը հարցունեմ անարժանարար, որուն է յանցանքը, և
ո՞վ պատասխանատու ճանչնալու ենք: Ե՞տեմ կ'ըսեն թէ՛
ընդհանուր Հայոց կաթողիկոսը: Սասնի հաւատացողնե-
րուն խոնարհարար կը հարցունեմ թէ, Հայոց կաթողիկո-
սը մի գերբնական զօրութիւն ունի. — ո՞չ. մենք ենք,
ժողովուրդն է կաթողիկոսին ոյժը. անանկ չէ: Երեսուցի
խօսինք. մեզի պէս ժողովուրդ ունեցողն ի՞նչ ուժ կըր-
նար ունենալ այս մասին:

Թուրքահայաստանի մէջ երկու կաթողիկոս, երկու ալ
Պատրիարք ունէինք, սակայն թուրքերն հարիւր հազար
մարդ ջարդեցին. ի՞նչ ըրինք թուրքին որ ի՞նչ ընենք
Ռուսին: «Աթարքմ թուրքարքմ» քարա չ'ընենք. մենք
պէտք է լաւ գիտնանք, լաւ ուսումնասիրենք, ու հապա
խօսինք: Ամօթ է:

Ռուս կառավարութիւնն շատոնց է որ կաշխատի մեր
վանքերն ալ գրաւել ու եկամտաներն իւրացնել. ասոր
ի՞նչ պիտի ըսէք. չեմ ուզեր այս մասին երկարօրէն խօ-
սիլ, ինչու որ մենք ետ առաջ խօսելով՝ մեր թշնամի-
ներն վարպետ հանեցինք: Եւ Ռուս մեր հարիւր հազարն
ջարդել որ տուաւ, բոլորովին պարսպ տեղն էր կը կար-
ծէք: Այս տեղն ալ կարճ կապել պէտք է... ցաւ, որ
մարդու չենք կարող ըսել:

Ի՞նչ սխալ ըմբռնում ունեցողներ ունինք: Մտքերնիդ
բերէք, Պարոններ, երկու երեք տարի առաջ եղածներն:
Մեծն Բրիտանիոյ քառասուն հատ զրահաւորներն Տար-
տանելի բերանէն ետ դարձուողը ո՞վ էր: Ասիկայ պզտիկ
բան չի կարծէք. Մեծն Բրիտանիոյ համար մահ էր այդ,
բայց ի՞նչ ընէր. գիտացինն Ռուսն էր... և այսօր Անգ-
լիա, Գերմանիա, Աւստրիա, Իտալիա, ևն. ևն. իրենք զի-
րենք կորուսեր են, ու ինչ ընելին չեն գիտեր. ամբողջ
Եւրոպան ահի ու սարսափի մէջ է. զինակազմութեանց ձայ-
նը մինչև Ամերիկա կը հասնի կոր, վասն զի այնչափ նեղն
են, որ ձեռքերնին մինչև հոս կ'երկարցնեն, որովհետեւ
Մեծն Պետրոսի կապը գործադրուելու վրայ է:

Մենք, առանց մի քիչ հեռուն նայելու, երբ Հայրիկը
կը նախատենք՝ թէ ինչու՞ զօրութիւնը չի գործածեց-
ամօթ մեզի որ այսչափ կարճատես ենք: Կ'երկի թէ այն
Պարոնը, որ երկու գրեթով կ'ստորագրէր, խոշորացող
է նայր մեր վրայ, ու ասեմք թէ Հայ ժողովուրդի ոյժը
Եւրոպայի ոյժէն աւելի է. տա՛ր երկինք որ շրտակ ըլ-
լար, ո՞վ չուզեր. սակայն խոհմուտիւնն չէ երկու տարե-
կան տղու մը գլուխը ետեւուն տարեկան մարդու մը գլու-
խարկը դնել:

Ա. ՏԻԻՉԵԱՆ

ՔԱՐՈՂ ԵՒ ԴԱՍ — Վաղը, Կիրակի առաւօտ ժամը 10.30ին
էլքս Հօլի մէջ, Չորեքուրդը եւ Պրատուէյս

Ս Ո Ւ Տ

Արմէնիաի Կարթ Թւին մէջ Նիւ
Եորքէն գրուած նամակ մը կը կար-
դանք, որ քանի մը խօսք Չէյթուսի
կարօտելոց համար բանէ վերջը,
բացարձակապէս կը ստէ՝ թէ Նիւ
Եորքի Շարթթաթերթը հազիւ կըր-
ցած է 60 սուրբի շափ հանգանակել
Չէյթուսի համար: Անպատկառ ստա-
խօսը աւելի յառաջ կերթայ, երբ կը
գրէ այս տողերն.

«Նիւ Եորքի Հայերը յիշեալ լը-
րագրի կաշկանդող ցուցմունքի շըլ-
թան խզեցին, մի անկախ յանձնա-
խումբ կազմեցին «գործի մարդիկ»-
ներէ, որոնք իրենց ընտրած օժան-
դակ մարմիններէ համարաշխուժեալ-
բը քիչ ատենէն քանի մը հարիւր
սուրբ հանգանակեցին, և որ նախորդ
շարթթ իրիկուն (Գեկա. 17) շքեղ
հանգէս մը տալով ինպատակ Չէյթու-
սի, քանի մը հարիւր սուրբ ալ այդ
տեղ գոյացուց, որով Նիւ Եորքի հա-
յերը մի կողմի գումար Չէյթուսին
հայթայթելու բաղդին մէջ են այսօր:

«Սակայն ամեն ուրախալի երևոյթ
ունի իր տուր կողմը, որուն շա-
տեր անգէտ կը մնան. այսպէս Չէյ-
թուսի հանգանակութեան գործին
տխուր կողմն ալ շարթթաթերթի
ակամայ նահանջն էր. ինք ևս տըրտ-
մութեամբ համոզուեցաւ թէ ժո-
ղովուրդի աչքին առջև վարչ չունի:»

Այսչափ անպատկառ սուտ չէինք
ակնկալեր տեսնել Արմէնիաի մէջ, զի
կը յուսայինք թէ ձեռուներն իմարդիք
պիտի խնայէր իր թերթի մէջ իրեն
քաջ ծանօթ խնդրի մը այսչափ խե-
ղաթիւրուումը թոյլատրել: Մեզ կ'ե-
րկի թէ Արմէնիաի արգելի խմբագ-
րէն ու իր Նիւ Եորքի ստախօս թըղ-
թակցէն դատ մէկը չի կայ, նոյն իսկ
մեր հակառակորդներուն մէջ, որ
չի խոստովանի թէ Չէյթուսի հան-
գանակութիւնն ՏԻԳՐԻՍՈՎ յուզուե-
ցաւ ու Նիւ Եորքի Յանձնախումբը
ընտրուեցան ճիշդ այնպէս, որպէս
կազմուեցան միւս 20ի շափ յանձնա-
խումբներն: Ձի տեսնել ուզողէն ա-
ւելի կ'որ չի կայ աշխարհի մէջ: Հան-
գանակութիւնն 1440 սուրբը անցած
է արդէն: որմէ 200 լիրա ալ իր նը-
պատակին զրկուած է. կը հատկա՞նք:

Տ. Փորթուգալեան շատ խելացի
գործ մը պիտի ընէր, եթէ այդ Նիւ
Եորքի թղթակցութեան տակ փոխա-
նակ երեք ստուղանիչի՝ «Ստախօսը»
ստորագրէր ու ինքն ալ «ինտօրս»
ընէր զայն:

Չար նախանձը ինչե՛ր չընէր սա-
կայն... Ստեցէ՛ք քարեկամներ, որ-
չափ կուզէք. և այսպէսով՝ Արմէնի-
ան «ժողովրդի աչքին առջև վարկ»
կ'ունենայ...»:

Ձ Ո Ւ Ա Ր Ը Ա Լ Ի Ք

Լուսաւորչականը — կարգ ա՞ց ի՞ր
ՏԻԳՐԻՍԻ իմագործականը:

Բողոքականը — 25', ի՞նչ կայ որ:
Լ. — Կ'ըսէր թէ կառավարութիւն-
ները պիտի որոշեն հինգ տարի պահք
պահել:

Բ. — Ի՞նչ կ'ըսես, եղբայր, ես
բողոքական եմ. պահք չեմ պահեր,
վասն զի ներս մտածը մարդս չի
պղծեր:

Լ. — Բայց այս պահքը մարդու
միս չուտելու վրայ է:

Բ. — Ինչ որ ալ ըլլայ՝ միս է.
մենք պիտի ուտենք, քանի որ մեզ
չի պղծեր:

ԱՍՏԱՆ ԼՍԱՐԱՆ

էլքս Հօլ, Պրատուէյի և Չորեքուրդի
անկիւնը, Նիւ Եորք:

Այս կիրակի Երեկոյ, ժամը ճիշդ 8ին

Տեղի պիտի ունենան հակաճա-
նութիւններ որոշեալ նիւթերու վրայ.
պտիի երգումն երգեր, և ծանօթ ազ-
գային մը, որոյ անունը խնդրուած է
չի հրատարակել, հուանականարար
ներկայ պիտի ըլլայ և խօսի:

Ն Ո Ր Ա Վ Է Պ Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Կ Ա Ր Ե Ն Ի Ո Ր Ն Ա Մ Ա Կ Ը

Դ.

Նամակը գնաց... ու Ոսկի մը- տատանջութեան ուղկտանին մէջ ըն- կըղմած՝ պանդոկ վերադարձաւ:

Ոսկի այդ օրն բարեկամներու այ- ցելելով անցուց, ու գիշերը ուշ ա- անն անկողին գնաց՝ կարծես երազ- ներու հետ կուր մղելու համար:

Հետեւեալ առաւօտ Ոսկի սրոշ- եալ ժամանակէն շատ առաջ պատ- րաստուած կ'սպասէր: Անհամբերու- թիւնն կարելի չէր նկարագրել: Եթէ մերժած եմ, կ'ըսէր ինքնիրեն, կեան- քիս մեծագոյն սխալը գործած եղայ:

Երթալով անոր սիրտը աւելի ուժգին կը արօրիէր: Ժամանակը կամաց, շատ կամաց կը քայլէր: Համբերելու պէս դժուար բան չի կայ:

այսպիսի պարագաներու տակ ամիսը 60 օր կ'ունենայ: Ժամը 9 եղած էր սակայն. Ոսկի փորձեց նոյն աւուր լրագրիւր կար- դալ, բայց կարելի չ'եղաւ: Բոլոր լրագրիւրը սե կերեար աչքին: Նագա- րի գալտեան կ'սպասէր անհամբեր, և կուզէր որ քար...:

Ժամը 10 էր. բայց Նազար չե- կաւ: Ոսկի շփոթիլ սկսեց. ո՛հ, ի՛նչ պիտի ընեմ եթէ չի գայ, կ'ըսէր ինքնիրեն: Մահուան և կենաց բո- պէն էր դեռատի օրիորդին համար:

Հինգ րոպէ անցաւ. բայց Նազար չ'կար. սակայն յոյս կար տակաւին: Ժամացոյցը կարծես արագ քայլի սկը- սեց. Ոսկի կը դողար. երեսին գոյը նետեց ու աչքերը լեցուցան: Զարագուշակ նամակը ըրկած էր...:

Կէս ժամ անցած էր արդէն. վը- հատած աղջիկը մանուկի պէս ար- տասուել սկսեց. ալ յոյս չի կար: Այդ կարծ ժամանակամիջոցի մէջ Ոսկի ինքզինքը ծերացած կը կար- ծէր, զի՛ առանց մտածելու՝ մեր- ժած էր, ինչ որ գեղեցիկ սեռը կ'ե- րազէ ձեռք ձգել:

Կէս օրի մօտ էր արդէն. Ոսկի պատուհաններուն առջև նստած՝ ըզ- բաղեալ քաղաքը կը դիտէր՝ առատ արցունքներուն մէջէն, բայց ոչինչ կը տեսնէր:

Այս պահուս գանգալը հնչեց, բայց Ոսկի չէր լսէր բնաւ: Նորէն և նորէն հնչեց, սակայն Հայուհին չէր լսեր, թէ և քիչ մ'առաջ անոր ձայ- նին կ'սպասէր անձկանօք:

Անակնկալ այցելուն՝ պատասխան մը չ'առնելով, դուռը բացու և ներս մտաւ: Նազարն էր:

Ոսկի չի լսեց անոր ստքի ձայնն անգամ: Մէկ րոպէ վերջ Ոսկի երիտա- սարդ բժշկի թեւերուն մէջէն էր ար- դէն:

Պա՛ւ մը լուռթիւն տրեց... Ան- ակնկալ զրպուածներն մարդուս լե- զուն կը սանձահարեն շատ անգամ: Բայց քիչ մը վերջ ճամբորդ բը- ժիկը լուռթիւնն խզեց՝ ստիպեալ:

—Այս առաւօտ տունէս մեկնե- լու վրայ էի, ըսաւ, երբ բացասական նամակնիւր առի, ու յուսահատած ճամբայ ելայ՝ շոգենաւ երթալու հա- մար: Տունէս բաւական հեռացեր էի, յուսահատ ու տխուր, երբ տան ծա- ւան՝ վազելով՝ երկրորդ նամակնիւր ինձ բերաւ: Մնացեալը դիւրին է ե- րևակայել: Թէ ի՛նչ կը նշանակէր այս ամենն, անկարելի էր ինձ հա- մար բացատրել. և անձամբ եկայ որ բացատրութիւն ինչդրեմ ձեզմէ:

Ոսկի զարմացած՝ համառօտիւ պատմեց երկու նամակներու պատ-

մութիւնը, ու երբ թուղթերու դանգ- ուածին տակ՝ չի զրկուած նամակը փնտռել ելաւ, զայն չի գտաւ հոն: Գաղտնիք մը կար. զարմանալի հանելուկ մը, զոր կ'արժէր լուծել:

Նազար ցոյց տուաւ Ոսկիի իր եր- կու նամակներն ալ, որք տարակոյս չէին վերցնէր թէ հայուհոյ գրած- ներն էին:

Ոսկի անմիջապէս ծառան կան- չեց ու թուղթերուն տակ պահուած նամակի մասին բացատրութիւն պա- հանջեց անկէ:

Պիղծ ծառան՝ կարծելով թէ սը- խալ մը գործած էր, գողողալով պատասխանեց.

—Այո՛, Օրիորդ, երէկ երբ ձեր սենեակը մաքրելու եկայ, ձեր մեկ- նեկէն յետոյ, թուղթերուն մէջ գտայ այդ նամակը, և կարծելով թէ մու- ցած էք զայն յղել, անմիջապէս թղթատարին յանձնեցի: Կը յուսամ որ սխալ մը ըրած չ'եմ եղած:

Մտառայն առաքինութիւն մ'ու բարիք մը գործած էր: Երկու ամիսէն Կ. Պօլսոյ մէջ մի երջանիկ բնասնիք ալ աւելցած էր: Նազար և Ոսկի ամուսնացեր էին: (ՎԵՐՋ)

Հ Ա Յ Ն Ո Ր Ե Կ Ե Ր

Շաբթուս մէջ Նիւ Եորք հասած են Հետեւեալ հայերն. Սողոմոն և Ե. Յովհ. Տէրտէրեան, Սպարոնեան ըն- տանիք, Յակոբ Տաղլեան, Տիգրան Էջ- շեան և զաւակ, Տիգրան Ս. Ստեփան- եան և երկու զաւակ:

Պ Ա Տ Ա Ս Ի Ս Ի Ն Ե Ր

Յ. Գ. Ուսթըր— Ձեր նամակին կը փափաքէիք պատասխանել, բայց հասցէ չէիք տուած: «Ո՛ր է 100 առ- լարը» ուղղուած էր ոչ թէ ձեզ, կամ հանդանակիչ Յանձնախմբին, այլ անոնց, որք հանգանակութեան գումարը 100ի մօտեցուցած էին: Մի ցաւիք. սեղը չի կայ:

Ա Ձ Գ

Ձրանք Վսլայ Նիւ Եորքի վեց օրուան հեծելանիւթի մրցման մէջ Ղա- դարոս Խալաճեանի նոր հնարած հե- ծելանիւրը գործածեց: Հնարիչը այս նորահնար տեսակէն կրնայ չի նկ հա- յոց համար՝ հասը 50 տոլարի, իսկ հասարակ տեսակէն՝ հասը 25 տո- լարի: Դիմել 882 Հարիսըն Ավընիւ, Պօսթըն, Մասս.

Կ'ՈՒՉՈՒԻ

Երկու տարի առաջ Ամերիկայ ե- կող, Սեբաստիոյ Գայափուշար գիւ- ղացի, Պապիկ Թօփալեանի, Մարտի- րոս Թօփալեանի և Վարդան Տրդադ- եանի ուր և ի՛նչ վիճակի մէջ լինել- նին չի քիտցուի. ասոնց ծնողք յա- նուն մարդասիրութեան կը խնդրեն յիշեալներու հասցէն կամ ինչպէս լինելին գիտցողներէ՝ լուր տալ լը- րագրոյս Խմբագրութեան:

Ա Պ Ա Ն Ո Վ Ե Ի Փ Ո Ի Թ Ո Վ

Ստակ կը փոխադրեմ Պօլիս ու ուրիշ քաղաքներ. Պուլշարիոյ ամեն կողմերն, եթէպատու, Գահրիէ և Ա- ղէքսանդրիա՝ արտաքոյ կարգի գո- հացուցիչ պայմաններով:

Դրամ ըրկել ու գողներն եթէ ու- րիշի մը երթալէ առաջ մեզ գան ան- գամ մը՝ գոհ պիտի մնան ամեն կեր- պով. մեր դրամ ըրկելու միջոցը ա- մենէ ապահովն է ու կորուստի ա- մեն վտանգներէ բացարձակապէս հեռի:

Դիմել առ HAYG ASFAZADOUR, 209 East 43d St., NEW YORK, U. S. A.



AMIN MERHIGE & Co.

29 BROADWAY, NEW YORK, Room 212

ՄԵՄԵՐԱՆԱԿ (Հօրմէյ) ՎԱՃԱՌԱՎԱՆՔ Արեւելան և Տաճկական Ապրանաց Այս վաճառատունն իր տեսակին մէջ ամենամեծն է ինչու Եորք: Հոն կը վաճառուին ամեն տեսակ անդ- նադորներ, սեղանի, մէնթըլի, փի- անօյի ևն. մետաքսայ և ոսկեթել ծածկոցներ, Դամասկոսի վարագոյր- ներ, Բերլայի աղապանի, քէֆիա, ևն. ևն.:


Հայ վաճառականը կը հրաւիրուին փորձել միանգամ: Ուրիշ քաղաքնե- րէ եկող յանձնարարութիւնք փու- թով և խնամօք կը կատարուին: Գը- ներն չափաւոր և ապրանքներն լա- ւագոյն լինելով՝ ուրիշ ո'ւ է տուն չէ կարող մրցիլ այս տան հետ:

ՆԵՐՍԷՍ Մ. ԹՈՎՄԱՍԵԱՆ ԵՒ ՄԱՐԿԵՐ Մ. ԹՈՒՆՄԱՆԵԱՆ

20 1/2 Հըսարն Փողոց, Պօսթըն, Մասս. Միակ Հոյ նպարավաճառ ի Պօսթըն ի գիտութիւն Պօսթընի և շրջա- կայի հայերուն կը յայտարարենք թէ նպարեղէններու նոր խանութ մը բա- ցած ենք, ուր կը գտնուի ամեն տե- սակ ընտիր նպարեղէններ. օրինակ. պուլշուր, ծեծած, ոսպ, սիւնս, պամ- եոյ, արեւելեան ձեռք աղցուած սուրճ (խահուէ), Պայտերի պատրմայ, եսփ- րախ և այլն և այլն:

Ուրիշ քաղաքներէ յանձնարա- րութիւնք փութով և ճշգրի կը կա- տարուին՝ գոհացուցիչ գներով: Փորձեցէք սեզամ մը և գոհ պի- տի մնաք:

ՄԱՋԻ ԴԵՂ




Ռիտարը Կէր փեղքը մաքր գեղեցիկ և փայլուն թեւեղանալով է. ա- մէն անգամ որք մաքրուած կը անհրաժեշտ է ունենալ գործա- ծիւրն երկու քաղաքները որ կը գտնուին Պօսթընի և Նիւ Եորքի մէջ: Կրնէ զիստակնիւրը և անհրաժեշտ է ունենալ ինչպէս Կրնէ 45 սենթ: Կարելի է ստանալ ինչպէս Կրնէ 45 սենթ: Կարելի է ստանալ ինչպէս Կրնէ 45 սենթ:

րանէն: Դուրսի քաղաքներէն կրնան դիմել մեզ հայերէն գրուած նա- մակաւ: —Թարմ գեղեր, շափաւոր գներ: ՈՒՆՍՈՐԸ ՏՐԸԿ ԸՍԹՈՐ, Մաքս Հանուարիկ 472 3րդ ափիւ, Նիւ Եորք:

ՆԱՂԻ ՏԵՂ ԵՐԳ ՍՈՐՎԻՆԻՐ

Փղովրդին ծանօթ է թէ Հ. Է- կրինսանի 92ին հրատարակած եր- գարաններն ցանկ չունէին: Այդ եր- գարաններուն վրայ այժմ յաւելցու- ած է նաև ցանկն ու կը վաճառուին իմ քով: Գնել փափաքողներն դիմելու ենաւ. M. TASHJIAN, 261 William St, N. Y.



Ա. ԹՕՓՈՒՉԵԱՆ.

ԿՕՇԿԱՎԱՃԱՌ ԵՒ ԿՕՇԿԱԿԱՐ,

Թիւ 239 Իսթ 26րդ փողոց, Նիւ Եորք

Այս խանութին մէջ կը վաճառուին ամեն տեսակ կօշիկներ խիտ ածան գներով: Մեր հայրենակիցներէ փորձ մը միայն կը խնդրենք: Նոր ապսպր- ուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր եւ վայելուչ կերպով կը նորոգենք հին կօշիկներ շափաւոր գներով: Ուրիշ ի մը երթալէ յառաջ ինձ եկէք ան- գամ մը. եւ վստահ եղէք որ շատ գոհ պիտի մնաք: 239 Իսթ 26րդ փողոց Արանց կօշիկներ \$1.25է մինչև \$5.00 Կտնանց « \$1.25է « \$2.50 Տղայոց և աղջը- անց կօշիկներ \$0.50է « \$1.50


Հ Ի Ր Ձ Օ Լ Ա

ՄԱՋԻ ԴԵՂ



Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլե- ցունէ մազերը ու թափելը կը դադ- րեցնէ: Կը բուժէ նաև մորթի հրեան- դութիւնն ու կը մաքրէ թեփոցը: Միանգամ փոր- ձել բաւական է սա դեղին արժէքը գիտնալու համար որ արեւելեան խոսե- լէ պատրաստուած է յոյժ հաճելի մէ հոտով: Կը ծախուի րո- լոր գեղազորներու քով: Կրնէ 50 սենթ միայն: Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութենէն: Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարա- կեանի քով, թիւ 45 Էջուզէն ըսթ- րիթ, Ուսթըր, Մասս:

Կրնէ 50 սենթ միայն: Կարելի է ստանալ նաև ՏԻԳՐԻՍԻ րնկերութենէն: Կը վաճառուի նաև Տ. Յ. Բարա- կեանի քով, թիւ 45 Էջուզէն ըսթ- րիթ, Ուսթըր, Մասս:



ԳՐԻԳՈՐ ՊՕՅԱՃԵԱՆ

Կօշիկավաճառ և Կօշիկապր Թիւ 248 Էսթ Ըսթրիա, Փրովիտէն. Խանութիս մէջ կը վաճառուին ա- մեն տեսակ նոր և հին կօշիկներ՝ ա- ժան գներով: Կը նորոգենք հին կօ- շիկներ շափաւոր գներով: Արանց հին կօշիկներու, ձեռքով կարուածի համար, \$ 1.25, իսկ հասարակ կեր- պով նորոգուածի ընդհանուր հին կօշիկներու գներն 50—85 սենթ են: Վստահարար կրնամ ըսել թէ մեզ յաճախող հայրենակիցք միշտ գոհ պիտի մնան՝ մեր արդէն ունեցած յաճախորդաց նման:

Տ Պ Ա Ս Ե Տ Ի Գ Ր Ի Ս Ի

Այս տպարանի մէջ կը տպագրու- լու թէ՛ Հայերէն և թէ՛ Անգղերէն լեզուաւ ամեն տեսակ այցեւորման, նամակագրութիւն, հրատարակութիւն, շրջա- բերականներ, տեսարաններ ևն.: Մեր գները գոհացուցիչ են. տը- պագրութիւնն՝ մաքուր:

Ուրիշ քաղաքներէ եկող յանձ- նարարութիւնք կը կատարուին փու- թով ու խնամով: